ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2019թ. հունվար- մարտ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019 թվականի հունվար-մարտին ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

- Տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 106.5%, որին 3.1 տոկոսային կետով նպաստել է ծառայությունների ոլորտը (աճը՝ 17.3%), 1.7-ով՝ առևտուրը (աճը՝ 10.1%), 1.1-ով՝ շինարարությունը (աճը՝ 10.8%), 0.8-ով՝ արդյունաբերությունը (աճը՝ 2.0%): Գյուղատնտեսության 0.2%-ով նվազումը զսպել է ՏԱՑ-ը 0.2 տոկոսային կետով:
- ՏԱՑ-ի նախորդ տարվա համեմատ առավել ցածր ցուցանիշը պայմանավորված է 2018թ. 1-ին եռամսյակի համեմատ շինարարության 12.2 և արդյունաբերության 6.3 տոկոսային կետով աճերի դանդաղմամբ և գյուղատնտեսության 2.4 տոկոսային կետով նվազման խորացմամբ:
- Արդյունաբերության աճին դրական է նպաստել միայն մշակող արդյունաբերությունը՝ 3.4 տոկոսային կետով: Հանքագործական արդյունաբերության բացասական նպաստումը կազմել է 0.9, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու լավորակ օդի մատակարարմանը՝ 0.5, իսկ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակմանը՝ 0.002 տոկոսային կետ:
- Ըստ ֆինանսավորման աղբյուրների 0.4%-ով նվազել է պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարությունը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալն աճել է 12.1%_ով: Բնակչության միջոցների հաշվին՝ աճը 14.8%, իսկ կազմակերպությունների միջոցների հաշվին՝ 16.7%: Համայնքների միջոցներով իրականացված շինարարության ծավալը նվազել է 18.3%-ով: Կառուցվածքում գերակշռել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարությունը՝ 52.1%:
- Գյուղատնտեսության ենթաճյուղերից բուսաբուծության գծով գրանցվել է 48.7% աճ, իսկ անասնապահության գծով՝ 3.4% նվազում: Ձկնորսության գծով գրանցվել է 8.8% աճ:
- Ծառայությունների ծավալի աճին շարունակում են առավելագույն նպաստում ունենալ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ծառայության ենթատեսակները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.1 և 4.6 տոկոսային կետ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %



Արդյունաբերական արտադրանքի ծավալ, հունվար-մարտ, մլրդ դրամ



Շինարարության ծավալ հունվար-մարտ, մլրդ դրամ



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի աճ, հունվար-մարտ, %



Ծառայությունների ծավալ, հունվար-մարտ, մլրդ դրամ



- Առևտրի շրջանառության աճին 6.9 տոկոսային կետով նպաստել է մեծածախ առևտուրը, 3.9 տոկոսային կետով մանրածախ առևտուրը՝ աճերը համապատասխանաբար 14.9 և 7.8%: Առևտրի աճը 0.7 տոկոսային կետով զսպել է ավտոմեքենաների առևտրի -16.8% նվազումը:

  Շարունակում է գերակշռել խանութների միջոցով իրականացված մանրածախ առևտուրը՝ աճը՝ 9.1%, որին ըստ տեսակարար կշռի նվազման հաջորդում են՝ առևտրի այլ օբյեկտները՝ աճը՝ 10.7%, սպառողական ապրանքների շուկաները, նվազումը՝ 8.9%, կրպակները, աճը՝ 10.2% և գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, նվազումը՝ 31.0%:

2018 թվականի աճի դիմաց 2019 թվականի հունվարին-մարտին արտաքին առևտրաշրջանառության, այդ թվում և արտահանման և ներմուծման գծով գրանցվել է բացասական ցուցանիշ:

- Արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 1628.8 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ 5.0%, որից արտահանումը՝ 543.0 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ 8.6%, իսկ ներմուծումը՝ 1085.8 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ 3.1%: Տարեսկզբից վերոնշյալ բոլոր երեք ցուցանիշների գծով նվազումները դանդաղման միտում ունեն: Առևտրաշրջանառության ծավալի նվազումը հունվարին կազմել էր 11.6%, իսկ փետրվարին՝ 7.7%: Արտահանման ծավալի նվազման ցուցանիշները կազմել էին 16.3 և 12.0%, իսկ ներմուծմանը՝ 9.1 և 5.3%:

- Ըստ երկրների խմբերի արտահանման նվազում է գրանցվել բոլոր երեք ուղղություններով: Դեպի ԵՄ երկրներ արտահանումը նվազել է՝ 24.8%-ով, ԱՊՀ երկրներ՝ 5.1%-ով, այլ երկրներ խումբ՝ 0.2%-ով: ԵԱՏՄ երկրներ արտահանումը նվազել է՝ 6.0%-ով:

- Ըստ ՏԳՏ արտահանման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից արտահանման աճ է գրանցվել միայն 7-ի գծով՝ (գումարային տեսակարար կշիռը 47.0%), նպաստումը՝ 2.5 տոկոսային կետ:

- Ըստ երկրների խմբերի ներմուծման նույնպես բոլոր երեք ուղղություններով նվազում է գրանցվել: ԵՄ երկրներից ներմուծումը նվազել է 15.0%-ով, ԱՊՀ երկրներից՝ 2.4%-ով, այլ երկրներ խմբից՝ աճել է 3.2: ԵԱՏՄ երկրներից ներմուծումը նվազել է՝ 1.1%-ով:

- Ըստ ՏԳՏ ներմուծման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից աճ է գրանցվել 10 ապրանքախմբում, գումարային նպաստումը ներմուծման աճին՝ 4.7 տոկոսային կետ

Առևտրի շրջանառության ծավալ, հունվար-մարտ, մլրդ դրամ



Արտահանման ծավալի աճ, հունվար-մարտ, %



Ներմուծման ծավալի աճ, հունվար-մարտ, %



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



Արտահանման աճ, %	
թուղթ և թղթից իրեր	31.0
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	10.0
սարքեր և ապարատներ	10.0
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	7.4
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	3.9
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	9.7
պատրաստի սննդի արտադրանք	1.6

Ներմուծման աճ, %	
արվեստի ստեղծագործություններ	12.8 անգամ
փայտ և փայտյա իրեր	23.6
թուղթ և թղթից իրեր	14.1
հանքահումքային արտադրանք	14.0
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	10.1
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	8.8
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	8.7
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	4.7
բուսական ծագման արտադրանք	3.1
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	1.9

Արտահանման նվազում, %	
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	-71.4
փայտ և փայտյա իրեր	-71.3
արվեստի ստեղծագործություններ	-60.5
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	-34.8
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-22.9
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-26.2
մանածագործական իրեր	-16.5
հանքահումքային արտադրանք	-18.3
տարբեր արդյունաբերական ապրանքներ	-12.5
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-12.0
բուսական ծագման արտադրանք	-11.1
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-6.5

Ներմուծման նվազում, %	
սարքեր և ապարատներ	-34.5
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	-20.7
պատրաստի սննդի արտադրանք	-13.5
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-12.7
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-9.8
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-9.0
մանածագործական իրեր	-3.9
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	-0.9
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-0.9
տարբեր արդյունաբերական ապրանքներ	-0.7

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվար-մարտին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 2.0%-ով: Հիմնական ճյուղերից աճ է գրանցվել միայն մշակող արդյունաբերությունում:

- Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղում թողարկումը նվազել է 4.5%-ով էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ճյուղում՝ 3.1%-ով, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ճյուղում՝ 0.2%-ով, իսկ մշակող արդյունաբերությունում գրանցվել է 5.5% աճ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ
Հունվար-մարտ, %



- Մշակող արդյունաբերության ենթաճյուղերից արդյունաբերության աճին (ըստ տեսակարար կշռի նվազման) առավել մեծ դրական նպաստ են ունեցել սննդամթերքի արտադրությունը (աճը՝ 9.8%), ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 10.2%), ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադ-ությունը (աճը՝ 28.1%), որոնց գումարային նպաստումը արդյունաբերության աճին կազմել է 3.2 տոկոսային կետ: Աճ գրանցած բոլոր ենթաճյուղերի գումարային նպաստումն արդյունաբերության աճին կազմել է 4.5 տոկոսային կետ:
- Ըստ ՏԳԴ 2-նիշ դասակարգման մշակող արդյունաբերության 23 ենթաճյուղերից 3-ում գրանցվել է նվազում՝ (արդյունաբերության աճի գումարային զսպումը՝ -1.4 տոկոսային կետ):
- Արդյունաբերության արտահանում նվազել է: Նվազում է գրանցվել թե հանքագործական արդյունաբերության գծով, իսկ աճ՝ Մշակող արդյունաբերության գծով:
- Արդյունաբերական արտադրանքի արտահանումն ընթացիկ գներով նվազել է 6.4%-ով, դեպի ԱՊՀ երկրներ արտահանման աճը կազմել է 20.6%, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 22.6 %-ով իսկ դեպի ԱՅԼ երկրներ նվազել է 12.5%-ով:
- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ճյուղի արտադրանքի արտահանումը նվազել է 9.3%-ով, դեպի ԱՊՀ երկրներ աճել է 92.4%-ով, այդ թվում ԵԱՏՄ երկրներ՝ 1.07 անգամ, իսկ դեպի այլ երկրներ՝ նվազել է 9.9%-ով (տեսակարար կշիռը՝ 98.9%):
- Մշակող արդյունաբերության արտահանումը աճել է 0.5%-ով: Մշակող արդյունաբերության արտա-հանումը դեպի ԱՊՀ երկրներ աճել է 19.7%-ով, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 21.7%, իսկ դեպի ԱՅԼ երկրներ՝ նվազել 7.8%-ով:

Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի նպաստումը արդյունաբերության աճին, 2019թ. հունվար-մարտին, տոկոսային կետ